

Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ

ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ԼԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԿՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Քիչ 16



ՏՊԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Երևան



ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ



ՅԱՆՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՅԱՆՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՅԱՆՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՅԱՆՎԱՐԻ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱՅԻՆ ԳԼԽԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ



ՀԱՆՐԱՊԵՏԱԿ

ՀԱՆՐԱՊԵՏ هانراكيداق HANRAKIDAGUE

ՇԱՐԲԱԹԱԿԱՆ مجموعتعلوم JOURNAL ARMÉNIEN ENCYCLOPÉDIE

Զ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ || ԹԻԻ 16 || 19 ԱՊՐԻԼ 1903

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Մ Ա Ք Ս

Պատմական. — Ընդհանուր կանոններ. — Սակագին. — Ուղղակի փոխանցում. — Տարբերական տուրք. — Մասնատուրքով ապրանքներ. — Նմոյշ եւ ծրար. — Մքերանց. — Դրանգիդ. — Առեւտրական դաշնագիրներ. — Մեկնասեղույ վկայական. (սերդիֆիա s'orփին). — Մասնատուներ, ելն:

Ստուգաբաններ կ'ըսեն թէ ֆրանսերէն տուան (մաքսատուն) բառը ծագում առած է տուանալէն որ տուրք մըն էր ի վենետիկ եւ ներածեալ ապրանքներէն կ'առնուէր յօգուտ տօժին: Այս բառը կրնայ նաեւ կեղտական ծագում ունենալ: Արդարեւ Հռոմայեցիք Կոլուայի մէջ, ինչպէս իրենց գրաւած բոլոր երկիրներուն մէջ, ապրանքներու վրայ տուրք մը հաստատած էին որ ծանօթ էր բօրդօրիօմ անունով: Ինչ որ ալ ըլլայ, ապրանքներէն առնուած այս տուրքը շատ հին է: Յոյները ո'չ միայն ապրանքներէն, այլ գերիներէն ալ տուրք կ'առնէին: Սակագինը, որ երկար ատեն գործադրութեան դրուեցաւ Աթէնքի մէջ, արժէքին մէկ յիսուներորդն էր: Հռոմայեցիք մէկ քառասներորդը կ'առնէին, թէեւ այս սակագինն յաճախ փոփոխութեան ենթարկուեցաւ ըստ պիտոյից: Երկիր մը հռոմէական գաւառ ըլլալուն պէս, ապրանքներուն մուտքին, ելքին եւ նոյն իսկ յրջարբերութեան վրայ տուրք կը դրուէր իսկոյն: Այս տուրքին գանձումն ապահովելու համար, Հռոմայեցիք հազար ձեւակերպութիւններ ունէին, որոնց վրայ շատ թերի գաղափար մը միայն կրնան տալ արդի ամէնէն կրնձառտ կանոնները:

Ֆրանսայի մէջ ալ ապրանքներն հին ատենէ ի վեր մաքսատուրքի ենթարկուած էին։ Ֆրանսուա Ա.ի օրէն սկսեալ, այս տուրքեր գործածուեցան իբր միջոց վաճառականութեան պաշտպանութեան։ Օտար երկիրներէ եկած թաւիչներուն եւ մետաքսեղէն կերպասներուն մէջ մի ծրարին վրայ երկու ոսկիի տուրք մը դրուեցաւ իտալիայէ բերել տրուած ոստայնանկները պաշտպանելու համար։ Ֆրանսական գործարաններուն նոր թռիչ մը տալու համար 1567ի եւ 1572ի հրամանագրերը արգիլեցին ոսկի եւ արծաթ հիւսելագարդերու, թաւիչներու, սնդուաներու եւն. մուտքն եւ այս հիւսուածոներուն շինութեան ծառայող նախանիւթերու ելքը։ Այսու հանդերձ, այն ատենի մաքսային դրութիւնը տեղային վաճառականութեան փնասակար էր աւելի քան թէ օգտակար։ Տուրքերը կը գանձուէին անհաւասար եղանակով մը, անկապակից որոշմագրերով եւ սակագիններով, ոմանք ընդհանուր, ոմանք տեղական, որոնց կիրառութիւնը կը փնասէր երկրագործութեան եւ վաճառականութեան։ Վերջապէս, այնքան չատ եւ այնքան ծանր էին որ երկրին արտադրիչ ոյժերը չէին կրնար զարգացում ստանալ։ 1659ին Մազարէնի ուղղուած յիշատակագրի մը մէջ կը տեսնուի որ Լիւի բրդէ կերպասներու հակմը, որ 232 լիպրա կը կշռէր, Լիօն գալու համար 200 դուռեան (հին դրամ մը) ոսկի վճարած էր, առանց հաշուելու վալէնսի մաքսատուրքն եւն.։ Այս էր կացութիւնն երբ Քօլպէր միջամտեց։ Մինչ Եւրոպական ուրիշ Տէրութիւնք մեծ ջանքեր կ'ընէին իրենց վաճառականութիւնը տարածելու եւ իրենց ճարտարարուեստը կատարելագործելու համար, Ֆրանսա ո'չ վաճառականութիւն ունէր ոչ ճարտարարուեստ։ Իր երկրին պէտքերն ուսումնասիրած ըլլալով, Քօլպէր օգտակար տնօրինութիւններ ըրաւ։ Հասկցած էր թէ հանրային հարստութեան աճումին արգելք եղած են ներքին մաքսատուրքերը, սակագիններու անկապակցութիւնն եւ ձեւակերպութեանց կնճռոտութիւնը։ Ուստի ջանաց սրբագրել այս թերութիւնները։ 1664ի սակագինով, զոր Քօլպէր պատրաստեց, գաւառներու մէջ հաստատուած զանազան տուրքերը մէկ տուրքի վերածուեցան, որ կը պահանջուէր արտածութեան եւ ներածութեան ատեն։ Ջնջեց ճարտարարուեստի անհրաժեշտ նախանիւթերու ներածման տուրքն եւ չափաւոր տուրքեր սահմանեց օտար ապրանքներու համար։ Այս տնտեսական դրութիւնը, որուն մայր գաղափարը կը գտնուէր Լուի ԺԳ. ի հրամանագրին մէջ (1629 Յունուար), հզօրապէս նպաստեց Լուի ԺԳ. ի իշխանութեան մեծութեան։ Բայց Քօլպէրի հետապնդած մաքսային միացումը չկրցաւ բոլորովին գործադրելի ըլլալ։ Թէեւ 1664ի

սակագիրն շատ նպաստաւոր էր երկրին ընդհանուր շահերուն , բայց տասներկու գաւառներ միայն ընդունեցին անպայման : Միւսները պարզապէս մերժեցին , կամ ուզեցին ընդունիլ պայմանաւոր օտար երկիրներու հետ իրենց ազատ հաղորդակցութիւնը պահպանեն : 1790 Նոյեմբեր 5ի օրէնքն ամբողջացուց Քօլպէրի գործը : Հաստատեց միակ սակագին մը որ քանի մը արգելքներ միայն կը դնէր ինչ ինչ վաճառքներու դէմ , այն ալ ամբողջապահական եւ այլ օրինաւոր նկատումներով : 1806ին , 1807ին եւ 1808ին հրատարակուած օրէնքներ աւելի ծանրացուցին արգելքները : Միւս կողմէ , գաղթային բերքերը բարձր տուրքերու ենթարկուեցան : Մաքսանենգութեան դէմ պայքարելու համար , 1810ին հրատարակուած օրէնք մը մահուան պատիժ սահմանեց խուճրով եւ զէնքով կատարուած մաքսանենգութեան դէմ : Եթէ մաքսանենգը մէկ հոգի ըլլար եւ բնաւ զէնք չունենար , ցիւանս չղթայակապ աշխատութեան կը դատապարտուէր : 1810ի այս հրամանագիրն էր որ հաստատեց նաեւ մաքսային դասաբաններն , որոնք պատիժներ կը սահմանէին մաքսանենգերու դէմ : 1814ին , գաղթային բերքերուն վրայ ծանրացող տուրքերը թեթեւցան եւ մաքսային դատարանները ջնջուեցան , բայց արգելքի մասին դրուած օրէնքները պահուեցան : 1892 Յունուար 11ի օրէնքով հաստատուած մաքսային նոր դրութիւնն ունի երկու սակացոյց , Ընդհանուր սակացոյց , որ Ֆրանսայի հետ առեւտրական պայմանագիր կամ կարգադրութիւն չունեցող երկիրներու համար կիրարկելի է , եւ Նուազագոյն սակացոյց , որ Ֆրանսական ապրանքներուն առաւելութիւն տուող կամ զեղչեալ մաքսատուրք առնող երկիրներու համար է :

Ընդհանուր կանոններ . — Մաքսային ամէն գործողութիւն կ'սկսի մանրամասն յայտարարութեամբ մը (պէյաննամե) : Մանիֆեստօն ապրանքին ընդհանուր վիճակը կամ միահաղոյն յայտարարութիւնն է : Նաւապետը , նաւաւանդիստ ժամանելէն մինչեւ 24 ժամ պարտաւոր է մանիֆեստօն յանձնել մաքսատան : Մանրամասն յայտարարութեան մէջ կը նշանակուին ապրանքներուն տեսակը , քանակը , կշիռը , չափը , արժէքը , բեռնաւորուած տեղը , երթալիք տեղը , եւլն : Յայտարարելի արժէքն է այն գոր վաճառքներն ունին մաքսատուն ներկայացուած ատեն , այսինքն բոլոր ծախքերը կ'աւելնան արժէքին վրայ : Մաքսային արտօնագիր մը անհրաժեշտ է ապրանքները բեռնաւորելու կամ պարպելու համար և յս գործողութիւնք տեղի կ'ունենան մաքսային պաշտօնէից ներկայութեամբ : Նաւերն իրենց բեռները կը պարպեն կարգաւ , իրենց յայտարարութեան թուականին հա-

մեմատ : Ապրանքներն ուղղակի կը տարուին մաքսատուն եւ հոն կը քննուին , կը կշռուին , կը չափուին , եւն . : Ապրանքները մաքսատուքերուն գրաւականն ըլլալով չեն կրնար վերցուիլ մինչեւ որ մաքսատուքը չհատուցուի :

Մասնաւոր դրութիւններ . — Այն ֆրանսական ապրանքները , որք օտար երկիր կը շրջուին ու չեն ծախուիր , կրնան առանց տուրք վճարելու ետ դարձուիլ , եթէ հաստատուի անոնց ֆրանսական ապրանք ըլլալը : Նաեւ կրնան առանց տուրքի ընդունուիլ այն ֆրանսական ապրանքներն որոնք սխալմամբ օտար երկիր շրջուած են : Հողային կամ բնական արտադրութիւնք չեն կրնար վայելել վերադարձի սոյն առաւելութիւնը :

Մասնատուր մնացած ապրանքներ . — Ո՛չ ոք ստիպուած չէ վճարել մաքսատուրքն այն ապրանքներուն որոնց մուտքն արգելուած է , կամ դանոնք իրենց եկած տեղը շրջել , եթէ գրաւորապէս թողու մաքսատան : Արգելուած կամ ոչ ապրանքները , որոնք մաքսային միջերանոցներու մէջ կը մնան եւ որոշեալ պայմանաժամուն մէջ մաքսատուրքը վճարող կամ ապրանքին եկած տեղը շրջող մը չի գտնուիր , կը ծախուին եւ հասոյթը կը յատկացուի մաքսային վարչութեան :

Նմոյշներ եւ օրինակներ . — Ասոնք ընդհանրապէս կ'ենթարկուին այն գործողութեանց որք կ'ըլլան իրենց ներկայացուցած ապրանքներուն համար , այսինքն մաքսատուրք կը վճարեն : Այսու հանդերձ , ազատօրէն կ'ընդունուին հիւսուածոններու նըմոյշներ երբ շատ փոքր կտորներէ կը բաղկանան եւ օրինակէ զատ ուրիշ բանի չեն կրնար գործածուիլ . Իբր նմոյշ զրկուած մեծ կտորները կրնան մաքսատուրքէ ազատ ըլլալ , եթէ չահալիցներն հաւանին կտորներու վերածել զանոնք : Արժէքաւոր նըմոյշներ , զորս վաճառականը կամ գործարանատէրը չուզեր կտրուտել , առժամապէս կրնան ընդունուիլ , արժէքը կամ մաքսատուրքը աւանդ ձգուելով , պայմանաւ որ առ առաւելն վեց ամիսէն վերադարձուին , եւ եթէ չվերադարձուին , արժէքին քառապատիկը վճարուի իբր տուգանք :



ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԴԱՍԸՆԹԱՑՔ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՑՈՒԹԵԱՆ

Կազմութիւն անանուն ընկերութեան. — Անանուն ընկերութեան կազմութիւնն ենթակայ է նոյն այն պայմաններուն որոնցմով կը կազմուին բաժնեթուղթ ունեցող ֆոմանսիդ ընկերութիւնները: Անանուն ընկերութիւնը չի կրնար գործի սկսիլ մինչեւ որ ընկերային դրամագլուխն ամբողջապէս արձանագրուած և բաժնեթուղթերու արժէքին գոնէ մէկ քառորդը վճարուած չըլլայ: Այս արձանագրութիւնն եւ վճարումը կը հաստատուին հիմնադիրներու կողմէ յայտարարութեամբ մը, որ կը վաւերանայ նօտարութեան կողմէ, եւ կ'ենթարկուի առաջին ընդհանուր ժողովին նկատաւման: Բաժնեթուղթ քչեն կրնար 100 կամ 500 ֆրանքէ պակաս ըլլալ, ընկերային գրամագլուխին 200,000 ֆրանքէն աւելի կամ պակաս ըլլալուն համեմատ: Աւելորդ չէ ըսել որ անանուն ընկերութիւնը չի կրնար կազմուիլ, եթէ ընկերներուն թիւը եօթնէն պակաս ըլլայ: Շահակից ո՛ր եւ է անձի խնդրանք ընկերութիւնը կը լուծուի եթէ տարի մը անցած է յորմէհետէ ընկերներուն թիւը եօթնէն վար իջած է:

Կազմակերպութիւն անանուն ընկերութեան. — Անանուն ընկերութեան վարչութիւնն երեք տարրերէ կը կազմուի, այսինքն վարիչներէ, բաժնետէրք ընդհանուր ժողովէ եւ ֆոմսիսներէ: Վարիչներուն կը պատկանի ընկերութեան գործերուն մատակարարութիւնը: Անոնք ընկերութիւնը կը ներկայացնեն ամէն տեսակ գործառնութիւններու եւ դատերու մէջ: Անձնապէս պատասխանատու չեն, թոշակ կ'ստանան եւ վերընտրելի են: Վարիչները կ'ընտրուին ընկերներուն մէջէն: Իրենք կրնան իրենցմէ մին տնօրէն կարգել, որ վարչութեան մանրամասն գործերուն կը նայի: Կրնան մինչեւ իսկ, եթէ կանոնագրութիւնը կը ներէ, ընկերութենէն դուրս մէկն օժանդակ առնել, բայց այս պարագային մէջ իրենք պատասխանատու են անոր գործերուն համար:

Վարիչներու պատասխանատուութիւնը. — Վարիչները պատասխանատու են այն ծանր սխալներուն համար որք կը գործուին իրենց պաշտօնավարութեան միջոցին, օրինակի համար երբ կեղծ շահաբաժին կուտան կամ կը թողուն որ տրուի: Այս պարագային մէջ, վարիչները փնասուց հատուցման կը դատապարտուին: Եթէ ընկերային դրամագլուխին երեք քառորդը կորսուի, վարիչք պարտաւոր են բաժնետէրքերը ժողովի հրաւիրել եւ ընկերութեան լուծումն առաջարկել: Իրենց արգելուած է շահ մը ունենալ ընկե-

րութեան հետ եղած ամէն ձեռնարկի մէջ, եթէ սակայն արտօնուած չեն ընդհանուր ժողովին կողմէ: Իբր երաշխաւորութիւն իրենց հաւաքական վարչութեան, պարտաւոր են կանոնադրին որոշած թուով բաժնեթուղթ ունենալ որք աւանդ կը մնան ընկերութեան սնտուկին մէջ:

Վարիչներուն անուանումը.—Վարիչք կ'ընտրուին Ընդհանուր ժողովէն: Իրենց պաշտօնավարութեան տեւողութիւնը վեց տարիէն աւելի չի կրնար ըլլալ, եւ վերընտրելի են, եթէ կանոնադրին մէջ հակառակ տրամադրութիւն մը չկայ: Ընկերութիւնն այն ատեն միայն կազմուած կը նկատուի երբ վարիչներն ընտրուին եւ վաւերացուին: Առաջին վարիչները կրնան նշանակուիլ կանոնադրին մէջ, իրենց անուանումն Ընդհանուր ժողովին վաւերացման չենթարկուելու պայմանաւ: Այս պարագայէն մէջ իրենց պաշտօնն երեք տարիէն աւելի չի կրնար տեւել:

Ընդհանուր ժողով.— Բաժնետէարց Ընդհանուր ժողովն երկրորդ տարրն է որուն կ'հանդիպինք անանուն ընկերութեան վարչութեան մէջ: Ընկերութեան կազմութեան անհրաժեշտ պայմանները կատարուելուն պէս, Ընդհանուր ժողովոյ՝ առաջին նիստը տեղի կ'ունենայ հիմնադիրներուն յայտարարութիւնները ճշտելու եւ անոնց թուղթերը քննելու համար: Այս առաջին ժողովը կ'անուանէ վարիչներն եւ քօմիսէրները: Տարին առնուազն մէկ անգամ Ընդհանուր ժողով կը գումարուի: Կանոնադրութիւնը կ'որոշէ թիւն այն բաժնեթուղթերուն զոր ունենալ պէտք է ժողովին մասնակցելու համար: Որոշումները կը տրուին ձայներու մեծամասնութեամբ: Ժողովը պէտք է բաղկանայ բաժնետէարց առնուազն մէկ քառորդը ներկայացնող անդամներէ: Եթէ այս թիւը չգտնուի, նոր ժողով մը կը գումարուի որ պէտք եղած որոշումները կուտայ, առանց նկատի առնելու ներկայ բաժնետէարց թիւը: Սովորական կանոններն ասոնք են, բայց կարգ մը բացառութիւններ կան: Այն Ընդհանուր ժողովները, որք գումարուած են իւրաքանչիւրին բաժինը ճշտելու եւ վարիչներն ու քօմիսէրներն անուանելու համար, անհրաժեշտ է որ կազմուած ըլլան բոլոր բաժնետէրերէն, առանց նկատի առնելու անոնց ունեցած բաժիններուն թիւը: Վերջնական որոշում մը կարենալ տալու համար, պէտք է որ ընկերային դրամագլխին կէսը ներկայացնող բաժիններ հաւաքուած ըլլան: Եթէ այս թիւը ձեռք բերուած չէ, ժողովին որոշումն առժամանակեայ կ'ըլլայ, նոր ժողով մը կը գումարուի, եւ առաջինին ընդունած առժամեայ որոշումները վերջնական հանգամանք մը կ'առնեն եթէ ընկերային դրամագլխին առնուազն մէկ հինգերորդը ներկայացնող երկրորդ


Ժողովին կողմէ ընդունուին: Այն Ընդհանուր Ժողովները, որք կանոնագրին փոփոխութեան եւ ընկերութեան տեւողութիւնն որոշեալ պայմանաժամէն աւելի՝ երկարելու կամ նուազեցնելու առաջարկութեան վրայ պիտի խորհրդակցին, պէտք է որ ընկերային դրամագլխին առնուազն կէսը ներկայացնող բաժնետէրերէ կազմուած ըլլան: Կանոնաւորապէս գումարուած Ընդհանուր Ժողովի մը որոշումները պարտաւորիչ են բոլոր բաժնետէարց համար: Ընդհանուր Ժողովին գումարումէն առաջ ընկերութեան կացութեան վրայ գաղափար ունենալու համար բաժնետէարք արտօնուած են առնուազն 15 օր առաջ հաշուեկշռին եւ քովսէրներու տեղեկագրին ընդօրինակութիւններն ուզել:

Քովսէրք. — Կը մնայ խօսիլ քովսէրներու վրայ որք անանուն ընկերութեան մը մէջ ճիշտ այն պաշտօնն ունին զոր բաժնեթուղթով կազմուած քովսէրութեան մը մէջ ունին հսկող մարմինները: Տարեկան Ընդհանուր Ժողովը մէկ կամ աւելի քովսէր կ'անուանէ որք կրնան ընկեր ըլլալ կամ ո՛չ: Ասոնց պաշտօնն է յաջորդ տարուան Ընդհանուր Ժողովին տեղեկագիր մը տալ ընկերութեան կացութեան, հաշուեկշռին եւ վարիչներուն ներկայացուցած հաշիւներուն վրայ: Հաշուեկշռը վաւերացնող որոշումն արժէք չունենար, եթէ անոր կցուած չըլլայ քովսէրներուն տեղեկագիրը: Ընդհանուր Ժողովին գումարումին երեք ամիս մնացած, քովսէրք կրնան տետրակներն աչքէ անցընել եւ ընկերութեան կատարած գործերը քննել: Ասկից զատ, ի պահանջել հարկին, կրնան Ընդհանուր Ժողովն ի նիստ հրաւիրել: Քովսէրք պատասխանատու են իրենց պաշտօնին մէջ կատարուած թերութիւններուն համար:


Պահեստի դրամագլուխ. — Վիճակ. — Անանուն ընկերութիւնը պարտաւոր է իր զուտ շահուն առնուազն մէկ քսաներորդը պահել: Ասիկա պարտաւորիչ ըլլալէ կը դադրի երբ պահեստի դրամագլուխն ընկերային դրամագլխին մէկ տասներորդին հասնի: Անանուն ընկերութեան վրայ պարտք դրուած է նաեւ վեց ամիսն անգամ մը իր գոյքն ու պարտքը ցոյց տուող հաշիւ մը հանել: Բոլոր հաշիւներն Ընդհանուր Ժողովին գումարումէն առնուազն 40 օր առաջ կը յանձնուին քովսէրներուն որք կը ներկայացնեն նոյն Ժողովին:

Պատժական տրամադրութիւնք. — Պարտաւորք եւ բաժնեբուրք. — Ընկերութեան կազմութեան մէջ եթէ անկանոնութիւն մը պատահած ըլլայ, օրէնքին առջեւ գոյութիւն ունեցած չի նկատուիր: Վարիչները Պատժական Ատենի առջեւ կը դատուին, եթէ կեղծ շահաբաժիններ վճարած են առանց հաշուեկշռի կամ կեղծ

հաշուեկշիռներ պատրաստելով: Հոս քանի մը ծանօթութիւններ պէտք է տանք անանուն ընկերութեանց պարտաթուղթերուն եւ վերջապէս օտար անանուն ընկերութեանց վրայ: Կարգ մը անա- նուն ընկերութիւնք, մասնաւորապէս երկաթուղւոյ ընկերութիւն- ները պարտաթուղթեր կը հանեն: Այս գործողութիւնը պարզա- պէս փոխառութիւն մըն է: Պարտաթուղթը բոլորովին տարբեր է բաժնեթուղթէն: Բաժնեթուղթ ունեցողը ընկեր մըն է, մինչ պարտաթուղթ ունեցողը պահանջատէր մը: Ասկէ առաջ կուգան շատ մը հետեւանքներ: Եթէ ընկերութեան գործերն աղէկ չե- թան, պարտաթուղթ ունեցողները, միւս պահանջատէրերուն պէս, իրենց պահանջը կը գանձեն ընկերային դրամագլխէն զոր կը հայթայթեն բաժնետէրք, եւ եթէ ընկերային դրամագլխին ամբողջովին պարտքերուն վճարուի, բաժնետէրերուն ձեռքը բան մը չի մնար: Բաժնետէրն իրաւունք ունի շահաբաժնի մը, որ աւելի կամ նուազ կրնայ ըլլալ, ընկերութեան վիճակին համե- մատ: Շահաբաժինը կրնայ հարիւրին ութ, տասն եւ մինչեւ իսկ աւելի ըլլալ: Ընդհակառակը, պարտաթուղթին տէրն որոշ եւ անփոփոխ տոկոսի մը միայն իրաւունք ունի, օրինակի համար հա- րիւրին երեք, չորս կամ հինգ, փոխառութեան պայմաններուն համեմատ: Ասկէ կը տեսնուի որ եթէ բաժնետէրը կրնայ աւելի շահ մը ունենալ քան պարտաթուղթին տէրը, միւս կողմէ աւելի մեծ վտանգի ենթակայ է: Երկաթուղւոյ ընկերութեանց պար- տաթուղթերուն մեծ մասը սա առաւելութիւնն ունին որ կանխաւ որոշուած պայմանաժամի մը մէջ կը հատուցուին իրենց հանուած գինէն աւելի բարձր գինով: Օրինակի համար, 290 կամ 300 ֆր. հանուած պարտաթուղթերուն համար 500 ֆր. կը վճարուի որոշ- եալ ժամանակէ մը ետքը:



ԽԱՅՈՒԷԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ



Ահաւասիկ Պրագիլիոյ խահուէին զանազան տեսակներուն գլխաւոր հանգամանքը. —

Ռիօ-Եանէյրօ. — Միջին մեծութեամբ, կանոնաւոր եւ զանա- զան գոյնով հատիկներ, ախորժահամ:

Սանդօն. — Հատիկներուն ձեւը, գոյնը եւ ծաւալը փոփո- խակաւ: Հոտն ու համը ո՛չ այնչափ լաւ:

Պահիա. — Սովորական տեսակ, որ ոյժով հոտ մը ունի: Ա-

սոր լուացուած տեսակը կայ որ Բարավէլլա կը կոչուի և աւելի գորշ գոյն մը ունի քան թէ կանաչ: Սովորական պահիան զանազան տեսակներ ունի որոնք կը ճանչցուին Մօրիդէպա, Վաշկնաս, Մարակօ, Ժիք անուններով: Մօրիդէպայի տեսակը միւս երկու տեսակներէն աղէկ է:

Սեւաւա. — Միջին մեծութեամբ, կլոր, մոխրագոյն հատիկներ, որոնք զօրաւոր հոտ մը ունին:

Անագոն, Անսահարի. — Այս զանազան տեսակներն առեւտրական մեծ կարեւորութիւն մը չունին: Անսահարին առաջին տեսութեամբ կը զանազանուի միւսներէն, իր սեւ գոյնով:

Մասեռ, Քաք Վերք. — Խոշոր հատիկներ, բաց կանաչ:

Սենեկանպիս. — Այս խառնէն, որ Քագեկօ, Ռիօ-Նուեկո եւ Ափրիկեան Մօֆա աճուններով ծանօթ է, կը բաղկանայ չատ պզտիկ, կլոր և կարծր հատիկներէ, աղտոտ դեղին գոյնով եւ փոշիի ու փոքր քարերու հետ խառնուած: Մասնաւոր համ մը ունի, որ առաջին անգամ ախորժելի չի գար, բայց մարդ դիւրաւ կը վարժուի:

Կապօն. — Այս անուամբ կը ճանչցուին Ափրիկէի արեւմտեան եզերքէն եկած խառնէները, որոնք անհաւասար եւ անկանոն հատիկներէ կը բաղկանան, սեւ և կոտրած հատիկներու հետ խառնուած: Համը բաւական ախորժելի է:

Սան-Թօմէ. — Անկանոն և բաւական խոշոր հատիկներ, ճերմակի կամ դեղինի գարնող գոյնով:

Ռեխիւնիօն. — Ռեխիւնիօն կղզիին մէջ կը քաղուին հետեւեալ տեսակ խառնէները. —

1. — Պուրպօն, որ երկու տեսակ է, կլոր և սրածայր: Այս վերջինն ալ երկու տեսակ ունի, կանաչ և դեղին:

2. — Մօֆա, որ չատ կը տարբերի Ափրիկէի արեւմտեան եզերքէն եկած Մօքաներէն:

Համբաւաւոր Պուրպօնեան խառնէն ատենօք եւրոպական բերք էր և այս կղզին երկար ատեն մեծ հարստութիւն չինեց այն բերքին մշակութեան երեսէն: Բայց զանազան պատճառներով, արտադրութիւնն զգալապէս նուազած է: Հունձքը, որ 1816ին 3,625,000 քիլօ էր, 1880ին 545,000ի իջաւ:

Զանգիպար. — Շատ յարգի է:

Պեռպեռա. — Այս խառնէն, որ արեւելեան Ափրիկէի մէջ կը քաղուի, խոշոր եւ երկար հատիկներէ կը բաղկանայ եւ տըժգոյն դեղին գոյն մը ունի:

Մօֆա. — Այս անունը կը տրուի Ափրիկէի ներսերը մշակուած խառնէին, որ ծանօթ տեսակներուն ամէնէն յարգին,

սուղն և լաւագոյնն է: Գլխաւորապէս երկու տեսակ ունի. Մօֆայի մօֆա, որ պզտիկ, դեղնորակ, կըր հատիկներէ կը բաղկանայ եւ գրէթէ ամբողջութեամբ կ'սպառի թուրքիոյ, Պարսկաստանի եւ Եգիպտոսի մէջ, և Ասէնի մօֆա, որ գրէթէ ամբողջութեամբ Անգլիա կը զրկուի, փոքր քանակութիւն մըն ալ Մարսիլիա:

Պօմպէյ. — Կ'արտադրէ տեսակ մը խահուէ, որուն Մօքա անունը կուտան. բայց բուն Մօքային չի հաւասարիր:

Սէյլան. — Երկու տեսակ է. մին դեղնորակ, ընտիր տեսակ, եւ միւսը կանաչ եւ երկար հատիկներով:

Քօթիմեթն. — Մեծ առուտուր կ'ըլլայ այս խահուէին վրայ, որ տօնե ու դեղին հատիկներէ կը բաղկանայ:

Սիմկաբուր. — Խոշոր հատիկներ, ճերմակ, աղօտ. դեղին գոյներով, սեւ հատիկներու հետ խառն:

Ճավա. — Դեղին, և երբեմն կանաչ, որ կը ներածուի Հոլանտա, Պելժիա և Գերմանիա: Այս խահուէին համը շատ փոփոխակի է եւ զանազան տեսակներ ունի:

Դաիդի. — Կանոնաւոր հատիկներ, կամ ոսկեգոյն դեղին:

Նոր-Քալէսոնիա. — Առեւտրական կարեւորութիւն չունի, արտադրութիւնը սահմանափակ ըլլալով:

ԽՍՀՈՒԷԻ ՍՈՍԲՈՒՄԸ, ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԵՂՄԸ

Խահուէն կը զրկուի պարկով, հակով, կամ տակառներով, երկրին համեմատ: Շատ անգամ կը պատահի որ փոխադրութեան միջոցին խահուէն խմորումի կ'ենթարկուի, մանաւանդ երբ անձրևոտ եղանակի մը մէջ հնձուած եւ կտտարեւապէս չորնալէ առաջ պարկերու մէջ դրուած է: Այս պարագաներուն մէջ, հատիկները կ'ուռին, սեւորակ գոյն մը կ'առնեն, և փոշիներով կամ բորբոսով (ֆլւֆ) կը ծածկուին: Կը պատահի նաեւ որ խահուէները ծովին ջուրէն աւրուին: Այն ատեն, խահուէին արտաքին կողմը սեւորակ եւ ներքին կողմը կանաչ գոյն մը կ'առնէ, բորբոսի կամ օճառի հոտ մը կուտայ, և ծովային աղի մեծ քանակութիւն մը կը պարունակէ: Խահուէն այլ եւս չափէին չի պարունակեր: Խահուէին զանազան տեսակներուն մէկ տեսութեամբ ճանչնալը շատ դժուար ըլլալով. ծախողներն այս պարագայէն կ'օգտուին եւ զանազան տեսակներ իրարու հետ խառնելով, իբր Մօքա կը ծախեն: Կեղծ խահուէ ալ կը շինեն զանազան ալիւրներէ, կա-

ւահողէ կամ խահուէի մրուրէ կազմուած խիւսերով: Այս խիւսը խահուէի պէս հատիկներու կը վերածեն և կը չորցնեն: Բայց դիւրին է այս կեղծուած խահուէները ճանչնալ, պարզապէս ակռայի տակ դնելով: Զուտ խահուէն ընդհանրապէս ջուրին երեսը կը ծփայ: Շատ պարզ միջոց մըն ալ կայ խարդախեալ խահուէն անմիջապէս հասկնալու համար. — Աղացուած խահուէէն քիչ մը բան ջուրին մէջ կը ձգէք: Եթէ փոշին մէկ մասը ջուրին վրայ կենայ և միւս մասը տակն երթայ, եթէ ջուրն իսկոյն գունաւորուի եւ եթէ վերջապէս փոշիները կակուղնան, խահուէն խարդախուած է:

ԽԱՀՈՒԷԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Զանազան երկիրներու մէջ խահուէի արտադրութեան ստոյգ հաշիւը դժուար է գտնել, կանոնաւոր վիճակագրութիւններ չըլլալուն համար: Գը կարծուի թէ տարին վեր ի վերոյ 700,000 թօնօ խահուէ կ'արտադրուի, որ քիլօն 2 ֆրանքէն 1,400 միլիոն ֆրանքի գումար մը կը ներկայացնէ: Ամէնէն աւելի Գերմանիոյ եւ Ֆրանսայի մէջ կ'սպառի խահուէն, Բայց եթէ մարդ գլուխ սպառումն հաշուենք, առաջին կարգը կուգան Հոլանտա, Պելժիա, Զուիցերիա, Դանիա և Շուէս: Անգլիա օտար երկիրներէ, մանաւանդ Պրազիլիայէ ստացած խահուէներուն մեծ մասը կ'արտածէ: Արդարեւ, իր գաղթավայրերն իր սպառումին պէտք եղածէն աւելին կը շրկեն իրեն: Յաւելեալ մասը կը շրկուի Գերմանիա, Ֆրանսա, Ռուսիա, Իտալիա, եւլն: Հոլանտա եւրոպայի խահուէներուն հրապարակն է: Ֆրանսայի մէջ տարին 72 միլիոն քիլօ խահուէ կ'սպառի, Պորտոյի, Մարսիլիոյ եւ Հավրի նաւահանգիստներէն ներածուելով:

Առեւտրական սովորութիւններ. — Հավրի մէջ, խահուէն կը ֆախուի 3 ամիս պայմանաժամով, իրիւս պարկը մէկ կը կշռուի, բացի մոքաէն, որ հակ առ հակ կը կշռուի: Տակաւներն ալ զատ զատ կը կշռուին, ապրայ 2 0/0, Կանխիկի համար զեղջ 1/2 0/0 մէկ ամիսը: Ապրանքը վաճառուելէն ետքը միայն կը կշռուի: Մախքերն և յանձնումը վաճառողին վրայ են: Գնողը պարտաւոր է մէկ առ հազար վճարել ի նպաստ աղքատներու:

(Վերջին յօդուածը՝ ԽԱՀՈՒԷԻ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ Ի ԹՈՒՐԳԻԱ՝ յաջորդ թիւով)

ՏՈՄԱՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ



Զեք ու շահի յօգուածները անցընել դժուար կ'երեւայ, բայց ալ անոնք միւս հաշիւներուն չափ պարզ են: Կը բաւէ հետեւեալ ֆորմիւլը միտք պահել. —

Պարտի	ԴՐԱՄԱԳԼՈՒՆ	Պահանջէ
— Զէն	+	Շահ
Պարտի	Զէն ՈՒ ՇԱՀ	Պահանջէ
— Զէն	+	Շահ

Դրամագլխի հաշիւն անվթար կը ձգուի և զէն ու շահը կ'անցուի մասնաւոր հաշիւի մը մէջ, որ կը կոչուի « Զէն ու շահի հաշիւ »: Պարտքին կողմը կ'անցնին փաստները և պահանջքին կողմը՝ շահերը: Բայց եթէ ամէն զէն կամ շահ « Զէն ու շահ » հաշուին մէջ անցնի, բնականաբար այդ հաշիւը շատ պիտի ծանրաբեռնուի եւ բազրոնին օգտակար տեղեկութիւններ պիտի չկրնայ տալ: Արդէն խօսեցանք Ընդհանուր ծախք հաշուին օգտակարութեան վրայ: Այս տէսակէտով կ'ունենանք նաեւ « Տոկոս և յանձնարարողչէք » անունով հաշիւ մը, որուն պահանջքին կողմը կ'անցընենք ի նըպաստ մեզի եղած ամէն տոկոս, և պարտքին կողմը՝ մեր վճարած տոկոսները: « Խնայուած դրամն երկու անգամ շահուած է » կ'ըսեն: Ամէն բաղրօն լաւ կ'ընէ եթէ յաճախ և մանրամասնօրէն քննէ այս երկու հաշիւները, այսինքն « Ընդհանուր ծախք » եւ « Տոկոս ու յանձնարարողչէք »: Այս ուսումնասիրութիւնը կրնայ դիւրանալ վիճակագրական ցուցակներով, զոր հաշուակալը կը պատրաստէ մասնաւոր սիւնակի մը մէջ, ամէն տեսակ ծախքի համար: Հաշուակալը պէտք է բաղրօնին չափ խնամք տանի վաճառատան գործերուն, վասն զի ինք աւելի լաւ գիտէ ամէն մանրամասնութիւն և կրնայ շատ օգտակար բաներ թելադրել բաղրօնին:

Ձեռով վնասում (Յօդ. 22 եւ 23) . — Ձեքը կրնանք պանքտոմս մը նկատել : Սնտուկը Բրէտի Լիօնէէն կ'ընդունի չէքը (Յօդ. 22) , եւ Պուզօն ալ սնտուկէն (Յօդ. 23) : Անշուշտ շատ աւելի լաւ պիտի ըլլար Զանազանաց տետրին եւ Օրհաշուին մէջ անցընել « Պուզոն » Բրէտի Լիօնէի » , բայց հաշուակալք ոմանք կը պնդեն թէ ամէն յօդուածի մէջ պէտք է դեր մը խաղայ վաճառատան հաշիւներէն մին :

Փոխանակագրի վաճառում (Յօդ. 24) . — Բրէտի Լիօնէին տըուինք թիւ 500 փոխանակագիր մը 1746 Քրանքի : Պանքան 5 օրուան համար զեղչեց 50 սանդիմ , եւ հետեւապէս կը պարտի 1745,50 Քրանք , որու համար պարտական կ'ընենք զինքը եւ Փոխանակագրի հաշիւը՝ պահանջող : 50 սանդիմի զեղչը կորուստ մըն է : Պէտք էր Ձէն ու Շահը պարտական եւ Փոխանակագիրը պահանջող ընէինք , բայց որպէս զի ամէն անգամ յօդուած մը չանցընենք անխօյի համար , գանձելի տոմսերու տետրակին մէկ սիւնակին մէջ կը գրենք այս անխօնքը , եւ գումարը կ'անցընենք ամսէ ամիս :

Փոխանակագիր՝ յանախորդի վրայ (Յօդ. 28) : — Վաճառտունը պիտի ընդունի փոխանակագրին արժէքը , եւ այնինչը պիտի վճարէ : Հետեւապէս վաճառատունը պարտական կ'ընենք եւ այնինչը՝ պահանջող :

Գանձուած փոխանակագիր (Յօդ. 32) . — Մայիս 20ին գանձուեցաւ 501 թիւ փոխանակագիրը : Սնտուկը ստակ մտաւ եւ հետեւապէս կրնանք Սնտուկը պարտական եւ Փոխանակագրի հաշիւը պահանջող ընել , բայց այն ատեն օժանդակ տետրակներուն մէջ երկու , այսինքն մէկը Սնտուկի տետրակին մուտքին կողմը , եւ միւսը Փոխանակագրի տետրակին ելքին կողմը , իսկ Օրհաշուին մէջ մէկ յօդուած պիտի գտնուէր եւ օժանդակ տետրակներուն գումարն հաւասար պիտի չգար Օրհաշուին գումարին հետ : Այս հաւասարութիւնը պահպանելու համար « Գանձուած փոխանակագրեր » անունով հաշիւ մը կը բանանք եւ թղթապանակէն փոխանակագիր մը հանած ատեննիս պարտական կ'ընենք , իսկ եթէ գանձենք՝ պահանջող :

Օ Ր Հ Ա Շ Ի Ի

		19	Նոյն.		
15	22	Ընդհանուր ապրանք		7940	7940
		Պուղոնի			
		Մեր գնումը, 2 հակ մետաքս, արժ. 90/100 օր			
		20	Նոյն.		
19	9	Ծախս ապրանք վրայ		13	13
		Սնունդին			
		Ջանազան ծախք			
		21	Նոյն.		
22	7	Պուղոն		132	132
		Տոկոս եւ լաճանարարողչեփ			
		Ջեղչ 100 օրուան, 6% . Ի նպաստ մեզ			
		22	 Նոյն		
9	20	Սնունկ		7807	7807
		Քրեքի Լիօնեի			
		Մեր չէքը Պուղոնի հրամանին			
		23	 Նոյն		
22	9	Պուղոն		7807	7807
		Սնունդին			
		Մեր չէքը Քրեքի Լիօնեի վրայ			
		24	 Նոյն		
30	11	Քրեքի Լիօնե		1745	1745
		Փոխանակագրին			
		Մեր պօրաըրօն, արժէք			
		25	 Հոկտ.		
20	11	Քրեքի Լիօնե		3986	3986
		Փոխանակագրին			
		Մեր պօրաըրօն, արժէք			
		26	 Հոկտ.		
6	9	Ընդհանուր ծախս		215	215
		Սնունդին			
		Ջանազան ծախք			
		27	 Հոկտ.		
26	14	Նեկրը		2717	2717
		Ընդհանուր ապրանքին			
		10 ծրար սաթէն			
		Փոխադրելի			

Առեւտրական եւ Տնտեսական

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ ԹՈՒՐԲԻՈՅ

ԻԱ. — ՊԱՍՐԱ

Բնակիչ 200,000: Տարածութիւն 42.700 քառ. քլմ.: Ունի 4 սանճաք, 9 քաղա, 34 նահիյէ, 197 գիւղ:

1. Պասրայի սանճաք. — 1. Պասրա, 5 — 99. = 2. Գուրնա, 4 — 22 = 3. Քէվին

2. Միւնքեֆիր սանճաք. — 1. Միւնթէֆիք, 5 = 2. Սէվքիւլ Շույուխ, 7 = 3. Շադրէ, 2 — 5. = 4. Համատ, 2 — 1:

3. Նեհեքի սանճաք. — 1. Նէճէտ, 4 — 31. = 2. Քասիֆ, 0 — 19. = 3. Քասդար, 0 — 19.

4. Ամասայի սանճաք. — 1. Ամարա, 5 — 10. = 2. Տիկէր Շաթր, 0 — 4. = 3. Զէպիք:

Հետեւեալ միւթէսարըրըֆութիւնք ուղղակի ներքին Գործոց, նախարարութեան իրաւասութեան ենթարկուած են.

ԶԱՆԱՔ-ՔԱԼԷ ԿԱՄ ՔԱԼԱՅԻ ՍՈՒԼԹԱՆԻԷ (ՏԱՐՏԱՆԷԼ)

Բնակիչ 130,000: Տարածութիւն 7,500 քառ. քլմ.: Ունի 6 քաղա, 8 նահիյէ, 514 գիւղ:

1. Զանաք-Քալէ, 3 — 39. = 2. Պիղա, 3 — 175. = 3. Լարսէքի, 2 — 86. = 4. Էզինէ, 2 — 141. = 5. Այվաճըք, 0—57. = 6. Աքճէապատ, 0—16:

ԵՐՈՒՍԱՂԷՄ (ՔՈՒՏՍԸ ՇԷՐԻՖ)

Բնակիչ 350,000: Տարածութիւն 21,300 քառ. քլմ.: Ունի 4 քաղա, 2 նահիյէ, 328 գիւղ:

1. Երուսաղէմ, 1—169. = 2. Եաֆա, 1—126. = 3. Ղապա 0—71. = Խալիլ րահման, 0—52:

200

Բնակիչ 100,000: Տարածութիւն 100,000 քառ. քլմ.: Ունի 5 քաղա, 4 նահիյէ, 149 գիւղ:

1. Զօր, 0—72. = 2. Աշարէ, 0—34. = 3. Րէս իւլ այն 0—14. = 4. Էպուքէմալ, 0—19. = 5. Արէպան:

ԼԻԲԱՆԱՆ (ՃԷՊԷԼԸ ԼԻՊԵԱՆ)

Բնակիչ 250,000: Տարածութիւն 5,740 քառ. քլմ.: Ունի 8 քաղա, 40 նահիյէ, 931 գիւղ:


1. Շուֆ, 12—240. = 2. Մէտըն, 5—178. = 3. Քէսրէ-վան, 10—226. = 4. Պէտրէվէն, 8—151. = 5. Ճէգին, 2—107. = 6. Կիւրէ, 3—50. = 7. Զահլէ, 0—1. = 8. Տէյր էլ քա-մէր, 0—7:

ՍԱՄՈՍ (ՍՈՒՍԱՄ)

ԻԵՐԱՆԱԿԵՏՈՒՅԻՆ

Բնակիչ 50,000: Տարածութիւն 600 քառ. քլմ.: Ունի 4 նահիյէ:

1. Վաթի. — 2. Քարլովա. — 3. Խօրա. — 4. Մարաթօ:



ԱՍԻԱԿԱՆ ԹՈՒՐԿԻՈՅ ԱՐԱԲԱԿԱՆ ՎԻԼԱՅԵԹՆԵՐԸ

ԻԲ. — Հ Ի Ճ Ա Զ

Բնակիչ 3 500,000: Տարածութիւն 385,730 քառ. քլմ.: Ունի 3 սանճաք, 4 քաղա, 3 նահիյէ, 13 գիւղ:

1. Հիմազի սանճաք. — 1. Հիճազ, 2. = 2. Մէքքէ:

2. Մէսիքի սանճաք. — 1. Էլվէճ:

3. Յիսսէի սանճաք. — 1. Ճիտտէ, 1—10. = 2. Մամուրէթ իւլ Համիտ, 1—3. = 3. Սուարֆիէ:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ—ԱՐՏՕՆԱՏԷՐ

ԱՐՄԷՆ ԼՈՒՍԷՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ—ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Պապը Ալի նատտէսի, Թիւ 33, Իզտամ լրագրին դէմ

րու, որոց շինութեան մէթոտը նոյն է, եւ միայն ձեւով ու գոյնով կը տարբերին: Շաքարահատերը, որք մեծաքանակ կ'ապառին, տարբեր ձեւերով եւ տարբեր մեծութեամբ կը շինուին: Ոմանք հաստատուն են, ինչպէս նուշի, կաղինի, պիստակի շաքարահատերը, եւ ոմանք հոսանուտ, ինչպէս բանդակ եւայլն: Պրտուղները կը դրուին դարձող աւազաններու մէջ եւ շաքարի խաւով մը կը շրջապատուին եւ ապա կը չորցուին հովին դրուելով: Անգլիական կամ զուիցերիական ըսուած շաքարիկները (bonbon) թէեւ նոր հնարուած, առաջին տեղը բռնած են անուշեղէնի վաճառականութեան մէջ, շնորհիւ նոր գործիքներու որք միշտ կը կատարելագործուին: Ամէնէն կարեւորներն են « Գլանային շաքարիկ »ները, որք այնպէս կը կոչուին, վասն զի շաքարը, ուղուած աստիճանով եփելէ եւ նախապէս անուշահոտուելէ ետքը, երկու գլաններու մէջէ կ'անցնի, որք այդ խիսին վրայ կը դրոշմեն գանազան ձեւեր: Այն գլաններով շինուած տեսակներն անհամար են եւ ամէն օր ուրիշ ձեւեր կը հնարուին: Անուշեղէն շինելը էապէս բարիգեան ճարտարարուեստ մ'է: Արտադրութեան ամէնէն կարեւոր կեդրոններն են՝ Բարիզէ եւք՝ Վէրտէօն, Լիօն, Պորտօ, Նանսի, Լիլ, Օրլէան եւ Քլէրմօն Ֆերրան:

ԱՆՎԷՐՍ (Գերմաներէն՝ Antwerpen, Անգլիերէն՝ Antwerp, Սպաներէն՝ Amberes, Բորգուկալերէն՝ Antuerpia). — Դեք. — Aarsaarnibus. — Վաճառականութիւն. — Նաւահանգստի ծախիւ. — Վաճառման պայմաններ. — Պանֆաներ. — Պելժիոյ ամէնէն կարեւոր եւ գլխաւոր շահաստանը, Պրիւսէլէ 44 քիւմ. հեռու, 327,000 բնակչով: Կեդրոնական Եւրոպայի ճարտարագործ կեդրոններուն հետ կապուած է երկաթուղիով: Անվէրս առեւտրական շատ գործեր խից մրցակից ծովային քաղաքներէ, ապրանքները շուտով պարպելու եւ բեռնաւորելու յատուկ իր կատարելագործեալ մեքենաներուն շնորհիւ: Յորմէհետէ Համպուրկ, Ռօդէրտամ, Ամսթէրտամ եւայլն իրենց դիրքը փոխեցին ու բարեւոքեցին, յաջողեցան ետ առնել մէկ մասն առուտուրին զոր Անվէրս խլած էր իրենցմէ: Առեւտրական շրջանակները կը հաստատուին աշխարհագրական դիրքի համեմատ: Անվէրս Համբէն և Տընքէրքէն աւելի մօտ է Ֆրանսայի հիւսիսային կողման. Ալզաս-Լօռէնի, Գերմանիոյ եւ Զուիցերիոյ մէկ մասին, և Համպուրկէն ու Պրէմէն նուազ հեռու է Գերմանիոյ հարաւային մասերէն: Մրրցումը գոյութիւն ունի Համբրի հետ, Ֆրանսայի հիւսիսային մասին

մէջ, եւ Համպուրկի ու Հոլանտական նաւահանգիստներու հետ՝ Գերմանիոյ մէկ մասին մէջ։ Անվէրսի քարափին շինութենէն ետքը որ 1878ին սկսաւ եւ 1884ին աւարտեցաւ, քաղաքին առջեւ գլուխուած գետին լայնութիւնն եղաւ 350 մէթր, Այս գետը Էսքօ, դէպ Հոլանտա կ'ուղղուի։ Երեսուն տարի առաջ, Էսքօ երկու գետաբերան ունէր։ 1867ին շինուեցաւ Պաթի փակոցը, որ արեւելեան գետաբերանը գոցեց եւ ստիպեց որ գետին ջուրերն անցնին արեւմտեան թեւէն որ հիւսիսային ծովու հետ կը հաղորդակցի չորս նաւարկելի անցքերու միջոցաւ։ Ֆրանք եւ Գերման պատերազմին ժամանակ դրանգիդի ամրոցը վաճառականութիւնը Անվէրս եկաւ։ Այն առեն հասկցուեցաւ կեդրոնական Եւրոպայի այս բնական նաւահանգիստին աշխարհագրական դիրքին կարեւորութիւնը։ Ուստի, Պելժ կառավարութեան կողմէ մասնաւոր յանձնաժողով մը կազմուեցաւ նաւահանգստին կանոնաւորման համար։ Նաւային ճարտարապետութեան նորանոր յառաջդիմութիւնք եւ Անվէրսի վաճառականութեան տարածումը զանազան աշխատութիւններ պահանջեցին։ Պարպարուսայի եւ Ֆրիսլիս սեռ Կրուսի պէս շոգենաւեր, որոնք 10,600 տկան թօնօ տարողութիւն ունին, առանց ամենափոքր անպատեհութեան կ'իջնեն ու կ'ելնեն Էսքօ գետէն։ Նաբուլէոն, հասկնալով Անվէրսի տեղագրական դիրքին առաւելութիւնը, հրամայեց նաւարան մը շինել եւ քաղաքին հիւսիսային կողմը փորել երկու աւազան որոնք նաւարկութեան առջեւ բացուեցան 1811ին եւ 1813ին։ Քարափ ալ շինել տուաւ։ Այս աշխատութիւնք 13 միլիոն ֆրանք արժեցին։ Հոլանտական իշխանութեան ատեն 500,000 ֆր. եւս ծախսուեցաւ քարափին աւարտման համար։ 1828ին շինուեցաւ մեծ մթերանոցը։ 1865ին քարափն երկարեցաւ եւ երկաթեայ գիծեր հաստատուեցան։ Տասն միլիոն ֆրանք ծախսուեցաւ նոր աւազաններու շինութեան որք 1869ին եւ 1873ին բացուեցան նաւարկութեան առջեւ։ Տէրութիւնն ինք ստանձնեց քարափի վերաշինութիւնն որ յանձնուեցաւ Բարիզի Քուվրէօ եւ Հէրսէն տան, 40 միլիոն ֆրանքի։ 20 հէքդար տարածութեամբ կայան մը շինուեցաւ քարափի վարչութեան համար։ Անվէրս քաղաքը, որ 1859ի եւ 1867ի փոխառութիւններէն 15 ուկէս միլիոն ֆրանք առած էր ծովային շինութեանց համար, որոշեց միեւնոյն նպատակաւ 25 միլիոն առնել 1874ի փոխառութենէն։ Քաղէնտիքի աւազանն երկարեցաւ եւ ուրիշ շինութիւններ կատարուեցան, 1882ին նոր փոխառութիւն մը կնքուեցաւ եւ 35 միլիոն ծախսուեցաւ նա-

աւհանգստի զանազան գործիքներու գնման եւ երկու նոր աւազաններու պեղման, որպէս զի անդրատլանտեան ամենամեծ չոգենաւներ կարենան մուտ գործել: Բոլոր աւազանները քաղաքին հիւսիսային կողմը շինուած են: Ասոնցմէ զատ, Անվէրս ունի նաեւ երկու աւազաններ որոնք միմիայն վերապահուած են ներքին չոգենաւներու: Ելեկտրական լոյս հաստատուած ըլլալով, նաւերը կրնան գիշեր ատեն մտնել ելնել: Էսքոդի քարափներուն վրայ հաստատուած մթերանոցներն 100,000 մէդր տարածութիւն մը գրաւած են 30 - 50 մէդր լայնութեամբ, եւ իրարմէ 12 — 24 մէդր բացութեամբ: Այս բաց տեղերուն մէջ կը գտնուին երկաթեայ գիծեր: Հիւսիսի աւազաններն իբր փոխադրական ոյժ կը գործածեն ճնշեալ ջուրը: Ճնշումը կը կատարուի չոգեշարժ մեքենայի մը միջոցաւ, հորիզոնական գլաններով եւ 150 ձիու ոյժով: Շարժիչ զօրութիւնը քարափին ամբողջ երկայնքը փոխադրելու համար միեւնոյն դրութիւնն ընդունուած եւ 200ակտն ձիու ոյժ ունեցող երկու մեքենաներ գետեղուած են: Քարափին ամբողջ երկայնքը՝ կան — 1 խորդակ (ծանր բեռ վերցնող մեքենայ) 10 թոնոնոց, 1 ջրաշարժական խորդակ 1 թոնոնոց, 65 ջրաշարժական խորդակ կէս թոնոնոց: Քաղէնտիքի աւազանին քարափին վրայ կը գտնուի բեռնաբարձ հեծան մը որ առ առաւելն 120 թոնոնոց բեռ մը կրնայ վերցնել: Կան նաեւ 50 անւորդներ: Քառորդ դարէ մը ի վեր, Անվէրսի նաւահանգստին կրած փոփոխութիւններուն հակառակ, չէնքերը սկսան չրաւել վաճառականութեան եւ նաւարկութեան պէտքերուն: 1891 Նոյեմբերին, յատուկ յանձնաժողով մը կազմուեցաւ ընդհանուր յատակագիծ մը պատրաստելու համար: Չէնքերու ընդարձակման եւ նաւահանգստին բարեկարգման նպատակաւ: Էսքոյի քարափին 3,500 մէդրն ալ անբաւական ըլլալով, որոշուեցաւ 2000 մէդր եւ աւելցնել գետին հարաւակողմը: Քարափն 110 մէդր լայնութիւն ունի, բայց Անվէրսի Առեւտրական Սենեակը կը պահանջէ որ լայնութիւնն 200 մէդրի վերածուի: Այս 2000 մէդրին շինութիւնը նուազուրդի դրուեցաւ 1897ի ամբոսն: Այժմէն իսկ, այս ընդարձակումն անբաւական կը նկատուի, որովհետեւ գործերն հետզհետէ կը շատնան:

Անվէրս, որ կը գտնուի ընդմէջ ծովուն, — որ աշխարհի ամէն մասերէն նախանիւթեր եւ սնդեղէն կը բերէ իրեն — եւ ցամաքային Եւրոպայի ամէնէն ճարտարագործ մասին, ունեցած է ճարտարարուեստներ ոչ այնքան կարեւոր: Սակայն քառորդ

դարէ մը ի վեր զգալի յառաջդիմութիւն կայ, 1830ին, Անվէրսի մէջ կային շաքարի 34 գտարաններ, որոնք տարին հազիւ 10,000 թօնօ շաքար կը գտէին: Այսօր 14 գտարաններ միայն կան որոնք 22,000 թօնօ շաքար կը գտեն:

Օղիի շինութիւնը, որ մինչեւ 1830 Հոլանտայի մէջ կեդրոնացած էր, արագօրէն տարածուեցաւ ի Պելժիա: Անվէրս ունի ալքօլի երեք մեծ գտարաններ, որոնք յաջողապէս կը մրցին արտասահմանի ամէնէն մեծ գտարաններուն հետ: Ասոնցմէ մին 300 գործաւոր կը բանեցնէ եւ տարին 15 միլիոն լիդրա կ'արտադրէ: Ագամանդի ճարտարարուեստը, որ 1824ին սկսաւ, հարաւային Ափրիկէի ագամանդի հանքերուն գտնուելէն ետքը մեծ յառաջդիմութիւն ունեցաւ: Անվէրսի մէջ կան ագամանդ կտրելու յատուկ 20 գործարաններ, որոնց վեցը շատ կարեւոր, և տարին 3 միլիոն ֆրանք թուշակ կը վճարեն: Անվէրս ունի սիկառի քանի մը մեծ գործարաններ: Երեսուն տարի առաջ, այս ճարտարարուեստը մենաշնորհի պէս բան մը եղած էր Պելժիոյ եւ Անվէրսի մէջ: Գործարանատէրերու և գործաւորներու յարաբերութեանց բարւոքման համար ջանքեր եղան և ասոնց հետեւանքն եղաւ գործարանատէրերէ ոմանց գաղթումը եւ ուրիշ քաղաքներու մէջ նոր գործարաններու հաստատումը: Անվէրս ունի մոմի, պարարտացուցիչ նիւթերու, բրինձի, մարկարինի, օճառի, պիսքիւի գործարաններ, նաւային շինութեանց յատուկ գործանոցներ, խաղախորդարաններ, ձուլարաններ, եւն.:

Անվէրս ցամաքային եւրոպայի ամէնէն կարեւոր հրապարակն է արմտիքի, կաշիի, քաուչուի, փղոսկրի, եւն. համար: Գլխաւոր ներածութիւններն են շինութեան փայտ, խահուէ, արմտիք, իւղաւոր հունտեր, քաուչու, բամբակ, կաշի, պտուղ, փղոսկր, բուրդ, մեղր, քարիւղ, բրինձ, ծխախոտ, միս, գինի: Արտածումին մէջ կը գտնուին պելժիական ճարտարարուեստի արտադրութիւններ և դրանգիդի մէջ՝ Գերման մեծ ճարտարարուեստին, Ֆրանսայի հիւսիսային և արեւելեան կողմանց և Զուիցերիոյ գործարաններուն արտադրութիւնք: Անվէրսի նաւահանգստէն ուղղակի գաղթումը 1854ին շատ մեծ էր, 25,711 հոգիներ գաղթած էին: Անկէ ի վեր այս թիւն հետզհետէ ինկաւ: Իէպի Միացեալ Նահանգները շոգենաւային նոր երթեւեկութեանց հաստատումը, 1873ին, նպաստեց ուղղակի գաղթումին: Անվէրսէն նաւ նստող գրէթէ բողոր գաղթականները, ընդհանրապէս գերման, աւստրիացի, իտալացի, զուիցերիացի և ուրու: Ամերիկա կը գաղթեն:

Աւազան մտնող նաւերը, ամէն մէկ ճամբորդութեան համար, թօնօ գլուխ 50 սանդիմ տուրք կը վճարեն քաղաքին: Այս տուրքին փոխարէն, կրնան երկու ամիս կենալ աւազաններուն մէջ. այս պայմանաժամէն ետքը, ամիսը թօնօ գլուխ 6 սանդիմ կը վճարեն: Նաւահանգստին մէջ կամ քարափի մը առջեւ բեռ առնող եւ պարպող նաւերը թօնօ գլուխ 30 սանդիմ կը վճարեն առաջին տասը ճամբորդութիւններու համար, 30 սանդիմ հետեւեալ տասն ճամբորդութիւններուն համար, եւ 14 սանդիմ՝ անկէ ետք կատարուած ճամբորդութիւններու համար: Նաւահանգիստ կեցող բայց գործառնութիւն չընող նաւերն ազատ են ամէն տուրքէ: Նաւուղիդ գործածելը պարտաւորիչ է: Տուրքը կը վճարուի եղանակին համեմատ: Զմրան եղանակը կը հաշուուի Հոկտեմբեր 1էն մինչեւ Մարտ 31, իսկ ամառն Ապրիլ 1էն 30 Սեպտեմբեր: Մանչի կամ Բա-տը-Քալէի մէջ եղած նաւերը, որոնք նաւուղիդ մը կ'առնեն Անվէրսի նաւահանգիստը մտնելու համար, սովորական տուրքէն 50% աւելի կը վճարեն, նաեւ 50 ֆրանք աւելի՝ առաքատանաւի համար, 47 ֆրանք՝ նաւաճիգի առաջնորդութեամբ ներս մտնող նաւերուն համար եւ 44 ֆր. չողենաւի համար: Նաւուղիդ մը առնելու պարտաւորութենէն ազատ են մարտանաւերը, զբօսանաւերը, ջուրէն վերի մասը 19 տասնորդամէդրի չհասնող նաւերը, հրինկ, մօրիւ կամ ուրիշ ձուկեր որսացող պեթիական եւ հոլանտական նաւերը, եւն.: Մովսիին ապահովագրական 92 ընկերութիւններ կը գործեն Անվէրսի մէջ. առնչ 8ը պելժ, 37ը գերմանական, 16ը անգլիական, 14ը ֆրանսական, 6ը զուիցերիական, 3ը հոլանտական, 2ը իտալական, 1ը շուէտական, 1ը նորվեգիական, 1ը ուսսական, 1ը յունական, 1ը ամերիկեան եւ 1ը ճարոնական են:

Ահաւասիկ քանի մը գլխաւոր ապրանքներու վաճառման պայմանները. -- Ոստիկները կը ծախուին 50 քիլոյի վրայ եւ ֆրանքով, եթէ գնումը ապառիկ է: Պայմանաժամ 30 օր, զեղչ 2%: Արմաիքը կը ծախուի 100 քիլոյի վրայ եւ ֆրանքով, կտաւատը տակառով եւ ալիւր՝ պարկով, 30 օր պայմանաժամաւ առանց զեղչի: Բամբակը կը ծախուի 50 քիլոյի վրայ եւ ֆրանքով, պայմանաժամ 3 ամիս: Փոխարժէքը կրնայ վճարուիլ տարեկան 5% զեղչով եւ գնումէն մինչեւ 20 օր վերջ: Ամերիկեան եւ հնդկական բամբակներու համար հակին 4% զեղչ իբր ապրայ եւ արեւելքի բամբակներու համար 6%: Կաշիները կը ծախուին 50 քիլոյի վրայ եւ ֆրանքով, զեղչ 3%, 20 օրէն ետք վճար

րելու պայմանաւ, կիտրոնները, նարինջները եւ Մալակայի չամիչները կը ճախուին սնտուկով, իսկ միւս պտուղները՝ 100 քիւլոյի վրայ, պայմանաժամ 30 օր, իւղերը կը ճախուին 100 քիւլոյի վրայ, ֆրանքով եւ 30 օր պայմանաժամաւ, առանց զեղչի, Բուրգը կանխիկ է, քիւլոյի վրայ, Պուէնոս Այրէսի ապրանքէն կը զեղչուի իբր ապրայ 5 քիւս առ մէն մի հակ, եւ միւս ապրանքներուն վրայ՝ 30% . Բարիւղը կը ճախուի 100 քիւլոյի վրայ 20% ապրայով եւ 2% զեղչով, Բրինձ՝ 100 քիւլոյի վրայ եւ ֆրանքով, զեղչ 2%, եւ ապրայ՝ 2% . Խոզի ճարպ՝ 100 քիւլոյի վրայ եւ ֆրանքով, 30 օրէն վճարելի, զեղչ 2% . Շաքար՝ 100 քիւլոյի վրայ զեղչ $1\frac{1}{4}$ % . ապրան զգալապէս կը փոխուի չաքարին եկած տեղւոյն համեմատ, Ծխախոտ՝ կէս քիւլոյի վրայ եւ ֆրանքով, վճարումը կ'ըլլայ, ըստ կամս ծախողին, կամ 30 օրէն 2% զեղչով, կամ 3 ամիսէն 1% զեղչով. ծախքերը գնողին վրայ ըլլալու պայմանաւ, վաճառողն իրաւունք ունի վճարման պայմանաժամը զեղչել տարեկան 5% սակով: Մանիլայի ծխախոտներուն համար իբր ապրայ $6\frac{1}{2}$ քիւս զեղչ չորս կենդինարնոց հակերու համար, եւ $3\frac{1}{4}$ քիւս՝ երկու կենդինարնոց հակերու համար, 2% զեղչ՝ պարզ կտաւներու մէջ պատատուած ծխախոտներու համար, 6 քիւս՝ Հավանայի եւ Բուլաղայի ծխախոտներուն մէն մի հակին համար, 2 քիւս՝ Ճավայի, Սուամադրայի եւ Էսմէրալտայի ծխախոտներուն մէն մի հակին համար եւ 5 քիւս Մեքսիկայի՝ ծխախոտներուն համար:

Ահաւասիկ միջնորդչէքի սակացոյցը. — Արմտիքի համար՝ 9 սանդիմ առ մէն մի հարիւրալիդը, ամերիկեան ալիւրի համար՝ 50 սանդիմ առ մէն մի տակառ, գինիի համար՝ 2 ֆր. առ մէն մի տակառ, նարինջի եւ կիտրոնի համար առ մէն մի սնտուկ $\frac{1}{2}$ եւ 1 ֆրանք, գինին համեմատ. իսկ ուրիշ ապրանքներու համար $\frac{3}{4}$ %: Նաւերու միջնորդչէքն է 75 սանդիմ առ մէն մի թօն: Ածանցը շանժերու միջնորդչէքն է $\frac{3}{4}$ առ հազար, ծախողին կողմէ վճարելի, առեւտրական թուղթերու համար, եւ 1 առ հազար, ծախողին եւ գնողին կողմէ վճարելի, աւանդներու, պարտաթուղթերու եւ այլնի համար: Պէտքիոյ մէջ առեւտրական թուղթերու դրոշմի տուրքն է $\frac{1}{2}$ առ հազար:

Պէտքիոյ պանքան, որ հաստատուած է 50 միլիոն ֆր. դրամագլխով. Անվէրսի մէջ մասնաճիւղ մը ունի, որ 1896ին 180,777 թուղթ զեղչած է 281,584,000 ֆր. ի արժէքով: Աւանդ դրուած գումարներուն արժէքն էր, 1896ին, 57,914,400 ֆր.:

Վարկի բացում, փոխառություններն եւ ուրիշ առեւտրական գործեր կը կատարեն տեղւոյն առեւտրական պանքաներն եւ Լոնտոնի ու Բարիզի սեղանաւորական հաստատութիւնք: Անվէրսի գլխաւոր պանքաներն են՝ Անվէրսի Պանքա, դրամագլուխ 20 միլիոն, Պանք Սանդըրալ՝ Անվէրզուազ, 9 միլիոն. Պանք տը Բրէտի Քոմէրսիալ, 8 միլիոն, Պանք տը Քոմէրս, 3 միլիոն. Պանք տը Լօնէօ, Լինօ եւ Ընկ., 15 միլիոն:

Անվէրս ունի ընդարձակ մթերանոց մը. Սակարան, Առեւտրական Սենեակ, 12 իրաւարար եւ հաշտարար Ատեաններ, Առեւտրական համալսարան մը, երեք տարուան դասընթացքով, որ երկու տարիէն ետքը առեւտրական գիտութեանց պսակաւորի եւ երկրորդ տարիէն ետքը առեւտրական եւ հիւպատոսական գիտութեանց բարձրագոյն աստիճանի պսակաւորի վկայական կուտայ:

ԱՆՏԷՐՆԱԽ. — Ծարտարագործ քաղաք Ռէն գաւառին մէջ, համանուն գետին ձախ եզերքին վրայ, Քօպլէնսէն 17 քիլմ. հեռի: Բնակիչ 6,150: Քիմիական արտադրութիւններու, օճառի, անուշահոտութիւններու եւայլն գործարաններ, խաղախորդարաններ եւայլն: Զաղաքքի քարերու եւ չիմենթոյի վրայ ընդարձակ առուտուր կ'ըլլայ:

ԱՆՔՕՆԷ. (Իտալիա). — Համանուն նահանգին գլխաւոր քաղաքը, Պօլօնեը-Պրէնաիդի գծին վրայ, Պօլօնեըէն 20½ եւ Հռոմէ 295 քմ. հեռի: Բնակիչ 56,586 հոգի: Նաւահանգիստ՝ Ադրիականի վրայ: Քարափին վրայ ընդհանուր մթերանոցներ կան, որք մասնաւորներու վարձու կը տրուին տարեկան առ մէն մի քառ. մէդր 3½ լիրայի հաշուով: Ապրանքներու պահպանման համար թօնօ գլուխ եւ շաքաթականի հաշուով վարձք մը կ'առնուի. որ ապրանքներու տեսակին համեմատ կը փոխուի: Ծարտարարուեստը շատ զարգացած չէ Անքօնէ գաւառին մէջ: Շաքարի երկու գտարաններ միայն կան, նաեւ քանի մը մանարաններ: Թուղթի երկու գործարաններ ալ կան Ֆապրիանոյի մէջ: Արտադրութիւններն են եղ, թուղթ, չուան, ալիւր, գաճ, բուրդ, մատուտակ, Փայանսեղէն, ծծումբ, մորթ, մետաքս, վուշէ եւ կանեփէ հիւսուածներ, կարասիներ եւայլն: Մծուձիբի հանածոյին արժէքը կը հասնի 530 հաղար լիրայի: Անքօնէ ունի Առեւտրական Սենեակ մը, եւ գործնական երկրագործութեան վարժարան մը:

ԱՆՕՍՐԱԶԱՓ. — Պզտիկ գործիք մ'է, ընդհանրապէս ապակիէ որ հեղուկներուն տեսակական ծանրութիւնը կը չափէ արագօրէն: Ալքօլաչափերուն պէս, ասոնք ալ, երբ ջուրին վրայ դրուին, գըլանածէ փող մը դուրս կը հանեն որուն վրայ աստիճանները գրուած են: Անօսրաչափը խողովակաւոր փոքրիկ գլան մ'է, վրան բարակ փողածեւ գործիքով մը, եւ ստորին մասին վրայ գնդակիկ մը, անդիկով կամ ծանր մարմինով մը լեցուն, որուն պաշտօնն է գործիքն ուղղահայեաց բռնել հեղուկին մէջ: Այս գործիքն իր զգայնութիւնը պիտի կորսնցնէր եթէ ամէն հեղուկի համար գործածուէր: Ուստի, սովորական անօսրաչափերը զանազան աստիճաններ ունին: Դիտելի է որ հեղուկին տեսակական ծանրութիւնը, այսին հեղուկին լիդրայի ծանրութիւնը ցոյց տուող անօսրաչափը գործածելու համար հաշիւ գիտնալու կամ բաղդատական ցուցակներ ունենալու է, տարրեր հեղուկներու ծանրութիւնն հասկնալու համար: Թէ՛ Ֆրանսայի եւ թէ օտար երկիրներու մէջ գործածուած անօսրաչափերը աստիճան մ'ունին որու վրայ համաձայնութիւն գոյացած է, այն է Պօմէի աստիճանը, որ ամէնէն աւելի տարածուածն է: Առեւտրական հրապարակին վրայ չատ անգամ կը տեսնուին անօսրաչափեր, ինչպէս կաթնաչափ եւայլն, որք իբրեւ ճիշտ նկատուած չեն: Ասոր պատճառն է նոյն գործիքներուն ածան ըլլալը: Խնամքով պատրաստուած գործիքները վայրկենապէս ցոյց կուտան հեղուկին աստիճանը կամ ծանրութիւնը:

ԱՇԱԿԵՐՏ. — Տղայ մը, որ արհեստաւորի քով կը մտնէ արհեստ մը սովորելու համար, կ'ըսուի աշակերտ: Իր ստրված արհեստին փոխարէն, աշակերտը, ըստ պայմանագրութեան, կամ դրամ կը վճարէ կամ իր աշխատութիւնը վարպետին տրամադրութեան տակ կը գնէ: Պայմանագրութիւնը կրնայ գրաւոր կամ բերանացի ըլլալ, բայց առաջինը նախընտրելի է: Պայմանագրութիւնը պէտք է պարունակէ վարպետին ու աշակերտին անունը, մականունը, արհեստը, բնակարանը, տարիքը, աշակերտին հօրը, մօրը կամ ներկայացուցիչներուն անունները, պայմանագրի տեւողութեան թուականը, վարձքի պայմանները, եւայլն: Աշակերտութիւնն ընդհանրապէս անչափահաս գործաւորներու կողմէ կատարուելուն համար, օրէնքով կարգ մը զգուշութիւններ ձեռք առած է անոնց բարոյականութիւնն երաշխաւորելու համար: 21 տարեկանէն վար արհեստաւոր վարպետ մը չի կրնար անչափահաս ա-

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ՇԱՔԱԹԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴ ՎԱՃԱՌԱԿԱՆԱՑ

Նոր տարիէն սկսեալ Հանրագիտակ կը հրատարակուի շաբաթական 20-24 էջէ բաղկացեալ . եւ ամէն ամսոյ մէջ մէկ թիւը պիտի յատկացուի Առաջնորդ վաճառականացի, 24 էջ.

Վեցամսեայ ու եռամսեայ բաժանորդագրութիւն չընդունուիր .

Տ Ա Ր Ե Կ Ա Ն Գ Ի Ն Ն Է

Պոլսոյ համար

30 շրուշ

Գաւառաց »

35 »

Արտասահման

45. »

Հատը

30 փարայ

Առաջնորդ վաճառականացի 12 տետր գաւառացի առնել ուղղորդ պէտք է վճարէ 12 շրուշ:

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Տ Պ Ա Ր Ա Ն Ը

Փոխադրուած ըլլալով՝

ՊԵՐՊԵՐ, ՊԱՊԸ ԱՆԻ ԶԱՏՏԷՍԻ, ԹԻԻ 38. ԻԿՏԱՍ ԼԵԱՆԻՐԻ ԴԷՍ

Ստացած է տպագրական նոր

կազմակերպութիւններ

եւ կը սպառէ ամէն տեսակ գիրքեր, մահագրքեր, հանգեսներ, օրհանգիստներ, հարսանեաց հրաւիրագրեր, նամակագրութիւններ . այլապէս, եւ տպագրութեան վերաբերեալ ամէն տեսակ պիտի տեսնենք : — Տպարանին սեփական 2000 հաւելի պատկերները յանախորդաց տրամադրութեան տակ են ձեռք :

Անմեղքի մաքրութիւն եւ հեղապահութեամբ

գաւառներէն ալ կ'ընդունի ամէն տեսակ յանձնարարութիւններ :

Մէծէկէի ԱՀԲԵԱՄԸ ԱՏԼԻՅԷ. — ՕՍՄ. ՔԱՂԱՔԱՅԻՆ ՕՐԻՆԱԳԻՐԲ. — Թարգմ. Ա. Ն. Թօթլայեան. — Օսմ. Բաղաքային Օրինագրքին հայերէն թարգմանութիւնն է, որ Օսմաններէն բնագրին հետ դէմ առ դէմ տպուած է : Հինգ հատորէ կը բաղկանայ, որ կը ծախուի 25 շրուշի թղթակազմ : Իսկ հինգ հատորն ի միասին կազմուած, կիսալաթ 30 շր. առանց զեղչի : Կը ծախուի բոլոր հայ գրավաճառներուն քով :

Հատը 30 փարայ